

1626—7ին տակաւին Պոլիս Պատրիարք էր: Պրուսա երկար կեցած պիտի չըլլայ, վասն զի Զաքարիա Վ. 1629ին արդէն թագաւորէն հաստատուած ընդհանուր Պատրիարք էր Պոլսոյ, ինչպէս կենսագրութեանը մէջ պիտի տեսնենք (ըստ Առաք. Թավրիժեցւոյ), եւ Յովհ. Խուլ անտարակոյս այս գործը կարգադրելէն ետեւ, Պոլսէն լեհաստան փութացած է կեսարացւոյն ետեւէն, ինչպէս կը տեսնենք հիմա:

Այստեղ, եւ Զաքարիա Վ. ի կենսագրութեան մէջ յառաջ բերուած ցիրուցան՝ բայց ստոյգ յիշատակարաններէն հետեւցընելով, անհիմն չէ ենթադրելը, որ 1613ին հաստատուած երեքմասնեայ Պատրիարքութիւնը մինչեւ Զաքարիայի վերջին անգամ գահընկէցութիւնը (1633) շարունակուած է, եւ Գր. կեսարացւոյ միջանկեալ յափշտակութիւնները նկատողութեան առնուելու չեն. այսինքն՝ Յովհ. Խուլ 1613—28 անընդհատ Պատրիարք նստած է ի Ստամպուլ. իսկ Զաքարիա 1613—1633 անընդհատ՝ ի սկզբան Սկիւտար եւ ի Ղալաթիա, եւ 1628—33 ի Ստամպուլ եւս: Ժամանակը պիտի լուսաւորէ այս պարագան: Յովհ. Խուլի, Գր. կեսարացւոյ եւ Զաքարիա Վանեցւոյ այս անխոնջ մրցակցութիւններու հիմն ու պատճառն այն կ'երեւայ՝ որ ազգին մէջ կրօնական երկու բաժինն արդէն սկսած էր կերպարանաւորուիլ, եւ նորին ու հնոյն այս հզօր պարագլուխները վերջնական յաղթութիւնը ձեռք բերելու ճիգեր կը թափէին: